ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2024 թվականի N 571 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2001-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 2001-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) հավելվածի աղյուսակի «Տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր» գլխի 24-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25-րդ կետով.

«

25.	7216918000	Սև մետաղից ցինկապատ պրոֆիլներ՝ սառը գլոցմամբ պատրաստված	Պրոֆիլներ	կգ	6 000 000	Հարավային Կորեա, Չինաստան, Լեհաստան, Թուրքիա, Ուկրաինա, Իրան, Հնդկաստան	Հարավային Կորեա, Չինաստան, Լեհաստան, Թուրքիա, Ուկրաինա, Իրան, Հնդկաստան	1 731 375 000	

».

2) հավելվածի աղյուսակի «Տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր» գլխի «Ընդամենը» պարբերության մեջ «1 359 301 704» թիվը փոխարինել «3 090 676 704» թվով.

3) հավելվածի աղյուսակի «Ընդամենը» պարբերության մեջ «34 250 108 408» թիվը փոխարինել «35 006 676 704» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ